

Հաստատված է՝
«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ»
ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի
« 19 » հունվարի 2015 թ. նիստում
Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Անհատական աշխատանքը ուսումնական գործընթացի բաղկացուցիչ է, որը նպաստում է ուսանողի ինքնուրույն վերլուծական աշխատանք կատարելու կարողությունների ու հմտությունների ձևավորմանը, ուսումնական նյութի ինքնուրույն խոր յուրացմանը և արտահայտվում է ընտրված թեմայի շուրջ աշխատանքի կատարումով, պատրաստումով և ներկայացումով:
2. Անհատական աշխատանք նախատեսվում է յուրաքանչյուր կիսամյակում՝ ըստ հաստատված ուսումնական պլանի:
3. Անհատական աշխատանքը բազմագործոնային գնահատման համակարգի գործոններից մեկն է: Անհատական աշխատանքի գնահատականը հաշվառվում է որպես տվյալ առարկայից ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի գնահատական, որը համապատասխան գործակցով ձևավորում է առարկայի վերջնական գնահատականը:
4. Անհատական աշխատանքի թեմաներն առաջարկում է դասավանդող դասախոսը տվյալ դասընթացի ծրագրային նյութին կից. դրանք քննարկվում և հաստատվում են ամբիոնի կողմից: Թույլատրելի է ուսանողների ակտիվ մասնակցությունը թեմաների առաջարկման ժամանակ:

5. Թեմայի ընտրությունից հետո դասախոսի կողմից տրվում է համապատասխան հիմնական և լրացուցիչ ուսումնական գրականության ցանկը՝ համապատասխան նշումներով:
6. Անհատական աշխատանքների կատարման ընթացքում դասախոսի կողմից իրականացվում է խորհրդատվություն:
7. Անհատական աշխատանքի ձևավորման պահանջները.
 - 7.1. Անհատական աշխատանքը ներկայացվում է համակարգչային շարվածքով կամ ձեռագիր տարբերակով:
 - 7.2. Անհատական աշխատանքը ունի տիտղոսաթերթ (տե՛ս Հավելված): Աշխատանքը էջակալվում է երկրորդ էջից, և վերջում նշվում է օգտագործված գրականության ցանկը:
 - 7.3. Յուրաքանչյուր առարկայի ուղղությամբ ղեկավար դասախոսի համար պետք է հաստատված լինեն անհատական աշխատանքների թեմաները՝ ըստ ուսանողների քանակի մինչև հոկտեմբերի 1-ը՝ առաջին կիսամյակում, մինչև մարտի 1-ը՝ երկրորդ կիսամյակում:
 - 7.4. Ամբիոնում ըստ ուսանողների անհատական աշխատանքի թեմաները պետք է հաստատված լինեն մինչև հոկտեմբերի 15-ը՝ առաջին կիսամյակում, մինչև մարտի 15-ը՝ երկրորդ կիսամյակում:
 - 7.5. Ուսանողը պարտավոր է ղեկավար դասախոսին ներկայացնել ավարտուն անհատական աշխատանքը մինչև դեկտեմբերի 15-ը՝ առաջին կիսամյակում, մինչև մայիսի 15-ը՝ երկրորդ կիսամյակում:
 - 7.6. Դասախոսը ստուգում է անհատական աշխատանքի բովանդակությունը, դրա համապատասխանությունը առաջադրված թեմային:
8. Անհատական աշխատանքի ներկայացումը և գնահատումը.
 - 8.1. Ուսանողը պարտավոր է ղեկավար դասախոսին ներկայացնել անհատական աշխատանքը բանավոր հրապարակային /ուսանողական խմբի ներկայությամբ/ զեկուցման ձևով նախապես հաստատված ժամանակացույցին համապատասխան:
 - 8.2. Անհատական աշխատանքը գնահատվում է 100 միավորանոց համակարգով. աշխատանքի միայն գրավոր հանձնման համար տրվում է 20 միավոր, բանավոր հրապարակային ներկայացման համար՝ առավելագույնը 80 միավոր:

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ

Ֆակուլտետ

Մասնագիտություն

Ամբիոն

Առարկա

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

Ուսանող, կուրս՝ _____

Անուն, ազգանուն

Կուրս

Գնահատականը՝ _____

Դասախոս՝ _____

Անուն, ազգանուն

ստորագրություն

Գյումրի

2014